Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 1

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2025-2026 ուս. տարվա
գիտական խորհրդի առցանց հարցման նիստի

ք.Երևան 08 սեպտեմբերի 2025թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 14–ը:

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. **Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի հեռակա անվճար ուսուցմամբ երրորդ տարվա ասպիրանտ Անժելա Տիգրանի Հարությունյանի ատեստավորման հարցը:**
2. **ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի պրոֆեսոր Ա. Սաղյանի օգնականի հավակնորդ Էմմա Առաքելի Խաչատրյանի թեկնածության քննարկան և հաստատման հարցը:**
3. **Ընթացիկ հարցեր:**

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. **Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի հեռակա անվճար ուսուցմամբ երրորդ տարվա ասպիրանտ Անժելա Տիգրանի Հարությունյանի ատեստավորման հարցը:**

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար ք.գ.թ., դոցենտ Անի Դադայանին, ով հաղորդեց գիտխորհրդի անդամներին, որ հարցը քննարկվել է Կենսաբժշկագիտության ամբիոնի ընդլայնված նիստում (նիստ 2, առ 05.09.2025թ, քաղվածքը կցվում է), որտեղ Ա. Հարությունյանը ներկայացրել է «Պարկինսոնի հիվանդության մոդելի վրա ամիգդալայում սինապտիկ

պրոցեսների մորֆո-ֆունկցիոնալ ուսումնասիրությունը հիդրոկորտիզոնի ազդեցության պայմաններում» թեմայով ատենախոսության շրջանակներում կատարված աշխատանքները: Նա տեղեկացրեց, որ ասպիրանտն ուսուցման նախորդ տարիներին մասնակցել է «Ընդհանուր պատրաստվածություն» կրթամասով նախատեսված դասընթացներին՝ ստանալով անհրաժեշտ կրեդիտները և կատարված գիտահետազոտական աշխատանքների արդյունքում տպագրել է մեկ հոդված: Ա. Հարությունյանը, ատենախոսական աշխատանքի ղեկավարի հետ միասին, մշակված ծրագրով շարունակում է իրականացնել հետագա գիտահետազոտական աշխատանքները:

Հաշվի առնելով ասպիրանտի կողմից կատարված աշխատանքները՝ ամբիոնը երաշխավորել է ատեստավորման (քաղվածքը կցվում է):

Որոշեցին՝ բաց քվեարկությամբ (միաձայն), հաշվի առնելով Կենսաբժշկագիտության ամբիոնի կարծիքը՝ ատեստավորել ասպիրանտ Անժելա Տիգրանի Հարությունյանին:

2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի պրոֆեսոր Ա. Սաղյանի օգնականի հավակնորդ Էմմա Առաքելի Խաչատրյանի թեկնածության քննարկան և հաստատման հարցը:

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի քարտուղար Անի Դադայանին, ով գիտխորհրդի անդամներին ներկայացրեց ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի օգնական ներգրավելու կարգը, գործառույթները և պահանջները:

Ա. Դադայանը նշեց, որ 2024/2025 ուսումնական տարվա առաջին և երկրորդ կիսամյակներում ինստիտուտի գիտական խորհրդի կողմից որպես պրոֆեսոր Ա. Սաղյանի օգնական հաստատվել էր Էմմա Առաքելի Խաչատրյանի թեկնածությունը, ով ցանկություն է հայտնել շարունակել այդ գործառույթների կատարումը:

Ելույթ ունեցավ նաև Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ Հ. Սիմոնյանը, ով նշեց, որ ասպիրանտ Էմմա Առաքելի Խաչատրյանը բարեխղճորեն կատարում է իր առջև դրված առաջադրանքները:

Որոշեցին՝ (միաձայն) հավանություն տալ Էմմա Առաքելի Խաչատրյանի թեկնածությանը՝ 2025/2026 ուս. տարվա 1-ին կիսամյակում որպես պրոֆեսոր Ա. Սաղյանի օգնական ներգրավելու համար:

Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
բ.գ.թ, դոցենտ **Ա. Մկրտչյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝
բ.գ.թ., դոցենտ **Ա. Դաղայան**